Մրցույթի հայտարարություն

«Երևանի Հրանտ Դինքի անվան հ. 44 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի համաձայն «Երևանի Հրանտ Դինքի անվան հ.44 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

1.Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը,

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր)

2.Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1)դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով,

2)Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4)տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են Երևանի Հրանտ Դինքի անվան հ.44 հիմնական դպրոցում 2022թվականի հունիսի 27-ից մինչև հուլիսի 8-ը և սեպտեմբերի 1-ից մինչև սեպտեմբերի 8-ը ներառյալ (չներառելով ամառային արձակուրդը), ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022թվականի սեպտեմբերի 23-ին՝ ժամը 12:00-ին, Երևանի Հրանտ Դինքի անվան հ.44 հիմնական դպրոցում, հասցե՝ Մինաս Ավետիսյան 89:

Տեղեկությունների համար դիմել հեռախոս՝ 010-24-19-41, էլ.հասցե՝ yerevan44schools.am: